

ԾՐԱԳԻՐ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ/ԿԱՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ  
 ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1.	Ծրագրի նպատակը	<p>Զինվորական ծառայության ընթացքում և/կամ պատերազմական գործողությունների ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց կենցաղային պայմանների բարելավում՝ սանհանգույցների կառուցում, վերանորոգում, տան հարմարեցում:</p> <p>2020 թ. սեպտեմբերի 27-ին մեկնարկած պատերազմի հետևանքով մեր շահառուների թիվը կտրուկ աճել է: Մեծ թիվ են կազմում հենաշարժողական խնդրներ ունեցող և սայլակով տեղաշարժվող զինվորները: Նրանց մեծ մասը բնակվում են բարձրահարկ շենքերում, կամ տան պայմանները հարմար չեն սայլակով տեղաշարժվելու համար, սանհանգույցները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Զինվորական ծառայության ընթացքում և/կամ պատերազմական գործողությունների ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց կենցաղային պայմանների բարելավում ծրագրի նպատակն է ստեղծել բարենպաստ պայմաններ Հայրենիքի պաշտպանների առօրյան հնարավորին հեշտ դարձնելու և նրանց ինքնուրույն կյանքը վերականգնելու համար: Ծրագրի հիմնական նպատակը շահառուների կյանքի որակի բարելավումն է, նրանց ինքնուրույն կյանք վերադարձնելը: Ծրագրով նախատեսվում է իրականացնել շուրջ 30 շահառուի կենցաղային բարելավում:</p>
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	<p>Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</p>
3.	Բարեգործը	<p>✓ Veterans of Armenia          Adress 1146 N Central Ave #684 Glendale CA 91202          Tax ID 85-3766890</p> <p>✓ Family Resque fund</p>

		<p>Adress: 105 E Harvard st., Glendale, CA, 222 Monterey 1604</p> <p>✓ Այլ, ոչ առևտրային կազմակերպություններ և ֆիզիկական անձինք</p>
4.	Ծրագիրը կատարողը	<p>«Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական հասարակական կազմակերպություն</p> <p>Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Մ. Ավետիսյան 4 փ., 6/19</p> <p>ՀՎՀՀ 00904586</p>
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, ք. Երևան, Աբովյան 58, առողջապահության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	<p>Ծրագրի բյուջեն 100,000,000 ՀՀ դրամ է</p> <p>✓ Veterans of Armenia կազմակերպությունը նվիրաբերում է 25,000,000 ՀՀ դրամ</p> <p>✓ Family Resque fund կազմակերպությունը նվիրաբերում է 10,000,000</p> <p>✓ Այլ, ոչ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հանգանակություններ՝ 65,000,000 ՀՀ դրամ</p>
7.	Բարեգործություն ստացողը	Բարեգործական ծրագրի շահառուներն են հայրենիքի պաշտպանության ժամանակ վիրավորում ստացած կամ առողջական խնդիրներ ունեցող շուրջ 30 անձ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01/02/2021 թ. – 01/02/2024 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>✓ Շահառուների տների, սանհանգույցների վերանորոգում, վերակառուցում - 80,000,000 ՀՀ դրամ</p> <p>✓ Կահավորում - 20.000.000 ՀՀ դրամ</p> <p>Միջոցառումները նախատեսված է իրականացնել 01/02/2021 թ. – 01/02/2024 թ.</p>

10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<ol style="list-style-type: none"> <li>1. Շինարարական աշխատանքներ– 40,000,000 դրամ</li> <li>2. Շինանյութի ձեռքբերում – 40,000,000 դրամ</li> <li>3. Կահույքի ձեռքբերում – 20,000,000</li> </ol>
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Մեր գործընկերներն են Երևանի Պետական Բժշկական Համալսարանը և ՀՀ Պաշտպանության Նախարարությունը:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում ծրագրի բարեգործներին և իրավասու մարմիններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ